ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Կատարող՝ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊԻ ԲՅՈՒԶԱՆԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ԴԱՍԱԽՈՍ՝ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2022
ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 65 ԴՊՐՈՑ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Բովանդակություն

1. Ներածություն
2. Հայաստանի զբոսաշրջության հնարավորությունները
3. ՈՒժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ վերլուծություն.
   - Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ
   - Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի իրավիճակը
4. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա , սպորտ
5. Աշխատանք և սոցիալական ծառայություն
6. Պատմամշակութային և բնական հուշարձաններ
7. Եզրակացություն

1.Ներածություն

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության արագ զարգացող ոլորտներից է:Զբոսաշրջությունը հանդիսանում է տնտեսական զարգացման խթանման և ընդլայնման, աճող մասնավոր և հասարակական ներդրումների, և ընդհանուր առմամբ սպառողական բավարարվածության հիմնաքար, ինչպես նաև տարեկան աճող այցելուների թիվը նպաստում է ներդրումների և զբաղվածության աճին Հայաստանում: Հայաստանի կառավարությունը ձգտում է օգտագործել այս աճը բարձրացնելու ընդհանուր ծախսերը մեկ այցելուի հաշվով, ներգրավել ավելի մեծ թվով այցելուների, և ապահովել բովանդակալից տեղական տնտեսական զարգացում մարզերում: ՀՀ կառավարությունը պարտավորվել է որդեգրել պատասխանատու զբոսաշրջության զարգացման ուղին և հատկապես հավատարիմ է ապահովել, որ զբոսաշրջության արդյունքում առաջացող օգուտները կլինեն կայուն և առավելագույնին կհասնեն՝ զարգացնելու և պաշտպանելու երկրի բնական և մշակութային ժառանգությունը: ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը և Շրջակա միջավայրի ծրագիրը մշակել են կայուն զբոսաշրջության 12 նպատակ՝ տնտեսական կենսունակություն, տեղական զարգացում, որակյալ զբաղվածության, սոցիալական հավասարություն, այցելուի բավարարվածություն, տեղական վերահսկողություն, համայնքի բարեկեցություն, մշակութային հարստություն, ֆիզիկական ամբողջություն, կենսաբազմազանություն, ռեսուրսների արդյունավետություն, բնապահպանական մաքրություն: Նշված նպատակների իրականացման համար ԶՀԿ-ն մշակել է հինգ հիմնասյուն՝

1.Զբոսաշրջության քաղաքականություն և կառավարում

2.Տնտեսական գործունեություն, ներդրումներ և մրցունակություն

3.Զբաղվածություն, արժանապատիվ աշխատանք և մարդկային կապիտալ

4. Աղքատության նվազեցում և սոցիալական ներառում

5. Շրջակա միջավայրի և մշակութային կայունություն

Անշուշտ, զբոսաշրջությունը յուրաքանչյուր երկիրում ունի և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն: Ուստի կայուն զբոսաշրջության հայեցակարգի նեդրումը խիստ հրատապ խնդիր է ամբողջ աշխարհում:

Պետք է նշել, որ Հայաստանում ևս կայուն զբոսաշրջության զարգացումը խիստ կարևոր խնդիր է: Դեռևս 2008թ. ընդունված Զբոսաշրջության զարգացման հայեցակարգում նշված է, որ զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել զբոսաշրջության կայուն զարգացում: Կայուն զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջային ուղղությունները զարգանում են հիմնականում զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա՝ բնական, պատմամշակութային, մարդկային, առանց որոնց պահպանության և վերարտադրության զարգացում ապահովել հնարավոր չէ:

Հայաստանում անհրաժեշտ է կայուն զբոսաշրջության զարգացման հայեցակարգի մշակում՝ հաշվի առնելով կայուն զբոսաշրջության վերոնշյալ 12 նպատակները և 5 հիմնայուները, որի իրականացմանը պետք է լծվեն բոլոր շահագրգիռ կողմերը: Կայուն զբոսաշրջության իրականացման համար կարևոր է և՛ պետության, և՛ մասնավոր հատվածի, և՛ տեղական համայքների, և՛ զբոսաշրջիկների, և՛ ոլորտի հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Կայուն զարգացման համար անհրաժեշտ է մարդկանց մտածելակերպի, կենսակերպի, վարքագծի, արմատացած արժեքային համակարգի փոփոխություն: Առաջնահերթ խնդիր է հասարակական գիտակցության ձևավորումը, ինչպես նաև էկոկրթության և կայուն զբոսաշրջության այլ ասպեկտների վերաբերյալ գիտելիքների ապահովումը: Զբոսաշրջային կազմակերպությունները պետք է ներդնեն կանաչ վկայականները կամ էկոպիտակները, օգտագործեն վերականգնվող էներգիայի աղբյուրներ, պետք է ապահովել կայուն աղբահանություն և աղբի վերամշակում, էլեկտրական կամ հիբրիդային տրանսպորտային միջոցների շահագործում, և այլն: Կայուն զբոսաշրջության զարգացումը պետք է նպաստի երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական զարգացմանը: Այն պետք է նպաստի աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության մակարդակի կրճատմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, տարածքային համաչափ տնտեսական զարգացմանը, ներդրումների իրականացմանը մարզերում, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, մշակութային արժեքների պահպանմանը, մարդկանց սոցիալական խնդիրների

լուծմանը, մարդկային կապիտալի զարգացմանը, համայքների զարգացմանը, տնտեսության այլ ոլորտների զարգացմանը, և այլն: Զբոսաշրջությունը հանդիսանում է աշխատատեղերի ստեղծման հինգ գերակա ոլորտներից մեկը:

Հաշվի առնելով Արարատի մարզում առկա մշակութային և բնության զբոսաշրջության վայրերը, սույն աշխատանքի հիմնական ռազմավարական առաջարկությունն է ամրապնդել մշակութային և բնության վրա հիմնված զբոսաշրջության արժեքային շղթան հետևյալ գործողությունների միջոցով. բարելավել կամ կառուցել ենթակառուցվածքների յուրաքանչյուր կարևոր արժեքային բաղադրիչը, արտադրանք և շուկայավարում, մարդկային ռեսուրսներ և ներդրումներ: Այս գործողությունները պետք է իրականացվեն տուրօպերատորների, մարզային և քաղաքային մակարդակներում պետական կառավարման գործակալությունների և ներդրողների հետ աշխատանքների միջոցով:

Այս նախագծում ներկայացվում է մարզի զբոսաշրջության փաստացի իրավիճակի և մարզի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ ձևակերպելով մարզի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, մարզին սպառնացող հիմնական վտանգները:

2.Հայաստանի զբոսաշրջության հեռանկարները

Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսական և սոցիալական աճի ամենազորեղ շարժիչ ուժերից մեկն է: Որպես ինքնուրույն զարգացող ոլորտ՝ զբոսաշրջության շարունակական աճը շատերի համար հզոր խթան կարող է հանդիսանալ: Այն մարդկանց առաջարկում է ապրուստի միջոց վաստակելու ավելի մեծ հնարավորություններ, քանի որ արգելքները՝ ոլորտ մուտք գործելու, ավելի փոքր են, քան արդյունաբերության մյուս ճյուղերում: Այն կարող է ավելի արագ տարածվել Հայաստանի բոլոր մարզերում, ինչպես նաև Արարատի մարզում:

Հայաստան ժամանած զբոսաշրջիկները հիմնականում գալիս են արկածային, ժամանցային, հանգստի կամ բնական միջավայրում իրենց հանգիստը կազմակերպելու, պատմամշակութային օջախներ այցելելու համար, քանի որ Հայաստանում բոլոր նախադրյալները նպաստում են այդ ամենն նույնիսկ

միաժամանակ իրագործելու: Փաստենք ,որ Հայաստան ժամանած զբոսաշրջիկներն , ընդհանուր առմամբ երկիրից հեռանում են շատ դրական տպավորություններով, ինչը բնականաբար կրկնակի այցելության խթան է: Նշենք, որ զբոսաշրջության կարևոր մաս են կազմում տեղացի զբոսաշրջիկները:

Արարատի մարզը կարող է լինել Հայաստանի զբոսաշրջության հիմնական օջախներից, սակայն պետք է նշենք, որ զբոսաշրջային ներուժն ամբողջությամբ չի օգտագործվում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով, ուստի (ուժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ) վերլուծության գործիքները կիրառելով, կփորձենք ներկայացնել Արարատի մարզի զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Զոսաշրջության զարգացման այս զեկույցի նպատակն է ձևավորել նպատակներ և գործողությունների ծրագիր, որը կսահմանի թե ինչպես կարելի է Արարատի մարզի զբոսաշրջային ներուժը վերածել ներքին և միջազգայնորեն գրավիչ ու մրցունակ զբոսաշրջության արդյունաբերության:

3.Ուժեղ ու թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ վերլուծություն.

3.1.Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ:

Մարզի աշխարհագրական դիրքը ռազմավարական նշանակություն ունի

Նկ.1

Արարատի մարզը հյուսիսից սահմանակից է Կոտայքի մարզին, որի հետ սահմանն անցնում է Ազատ գետով մինչև Ազատի ջրամբարը: Այնուհետև սահմանը թեքվում է դեպի արևմուտք, որտեղ սահմանակից է Երևան քաղաքին, Արմավիրի մարզին՝ մինչև Արաքս գետը, որով բաժանվում է Թուրքիայից, գետի հոսանք ի վար մինչև Նախիջևանի սահմանը: Հյուսիս արևելքում մինչև Հունուտի լեռնաշղթայի Հունուտ գագաթը, անցնելով մի կողմից դեպի Արաքս հոսող Արածո գետի, Վեդի Ազատ գետերի ավազանների, մյուս կողմից դեպի Սևանի ավազանը հոսող գետերի ջրբաժանով՝ այն է Գնդասար, Մանկուկ, Ծաղկավետ, Փոքր ու Մեծ Սպիտակ սարերով: Հունուտից մինչև Գնդասար մարզը սահմանակից է Վայոց ձորի, իսկ այնուհետև մինչև Կոտայքի մարզը՝ Գեղարքունիքի մարզին:
Հին է ԱՐԱՐԱՏ անունը: Այն գալիս է մարդկության հիշողության ակունքներից, աստվածաշնչային համաշխարհային ջրհեղեղի, Նոյյան տապանի ու բաբելոնական աշտարակաշինության ժամանակներից: Ի սկզբանե Արարատ անունը անխզելիորեն կապված է հայ ժողովրդի անվան հետ, որն արդեն հինգ հազարամյա հնություն ունի հաշված այն ժամանակներից, երբ Քրիստոսից քսանհինգ դար առաջ, այն է 2492 թվականի օգոստոսի 11-ին Հայոց ձորի ճակատամարտում նետահար ընկավ բռնակալ Բելը: Այդ ճակատամարտը ոչ միայն հայկյանների հաղթանակի ճակատամարտն էր ստրկություն ու կապանքներ բերող բռնակալի դեմ, այլև դարձավ հայոց ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ առաջին, բայց դժբախտաբար, ոչ վերջին ճակատամարտը:
Մարզի տարածքը, ըստ 7-րդ դարի ՝Աշխարհայոց՞-ի ընդգրկում է Այրարատ աշխարհի Ոստան Հայոց, Ուրծ, Արած գավառները և Մազազ գավառի մի մասը 2096 քառակուսի կիլոմետր է: Հետաքրքիր է, որ ըստ նշված աղբյուրի տվյալների Ոստան Հայոց, Ուրծ և Արած գավառների տարածքները միասին կազմել է 2175 քառակուսի կիլոմետր: Եթե նկատի ունենանք, որ Արած գավառի մի մասը այժմ գնտվում է Նախիջևանի կազմում, ապա ստացվում է, որ մարզի տարածքը մոտավորապես համընկնում է ՝Աշխարհայոց՞-ի տվյալներին: Ընդ որում Ոստան գավառն էլ միշտ կարևոր ու կենտրոնական դիրք է գրավել, այնտեղ են գտնվել հայոց Արտաշատ և Դվին մայրաքաղաքները և հանդիսացել է Արշակունի թագավորների արքունական կալվածքը: Այն երկրի համար հանդիսացել է քաղաքական, տնտեսական, մշակութային կենտրոն, ինչպես նաև Հայաստանով անցնող միջազգային առևտրական ճանապարհի հայաստանյան

ամենաբանուկ խաչմերուկներից մեկը:
Մարզի տարածքում կա չորս քաղաք և 93 գյուղական համայնք: Մարզի տարածքն ունի ինչպես կարևոր տնտեսաշխարհագրական, այնպես էլ ռազմավարական դիրք: Այնտեղով են անցնում հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող երկաթուղու մի հատվածը, հանրապետական, ինչպես նաև միջպետական նշանակության Երևան-Վայոց ձոր-Սյունիք և ապա Արցախ ու Իրան ավտոմայրուղին:
Եվ այսպես: Արարատ անունը ի սկզբանե անխզելիորեն կապված է հայ ժողովրդի ծագման ու գոյատևման հետ: Այդ անունով է կոչվում նրա գոյության խորհրդանիշը հանդիսացող լեռը, որն ամենաբարձրն է ոչ միայն Հայկական լեռնաշխարհում, այլև ամբողջ մերձավոր արևելքում,/Մասիսը՝5165մ, Սիսը 3925մ ,զոգավորությունը /դաշտ/, որը եղել ու մնում է ոչ միայն որպես մի բարեբեր ու հազարամյակներ առաջ յուրացված հողակտոր, այլև ՝թափառող մայրաքաղաքների՝ երկրի Հայաստանի համար տասներեք մայրաքաղաքներից հինգի հիմնադրման վայրը՝ Արմավիրից մինչև Երևան: Ի թիվս այլոց Արարատի անունն է կրում Հայաստանի Հանրապետության գողտրիկ անկյուններից մեկը՝ Արարատի մարզը՝ Արարատյան դաշտում, Արարատի անթարթ հայացքի տակ:
Բնության ու մարդու կողմից արարված այս հողակտորը աչքի է ընկնում բնական ու մարդու կողմից յուրացված կենսատարածքների յուրահատկություններով, խայտաբղետությամբ ու յուրօրինակություններով :
Աշխարհագրական դիրքը ուժեղ կողմ է՝ զբոսաշրջիկների համար ճանապարհի վրա քիչ ժամանակ է ծախսվում:

3.2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի իրավիճակը:

Բնակելի կառուցապատումն իրականացված է համատարած, մարզի 4 քաղաքները կառուցված են ըստ հատակագծերի: Արդյունքում կառուցապատումն ունի խառը տեսք՝ կան եւ առանձնատներ ,եւ հիմնականում 5 հարկանի բնակարաններ; Փողոցները կառուցված են թե լայն և թե նեղ: Գտնվում են ռելեֆին համապատասխան:
Հին բնակավայրերի գրավիչ ճարտարապետական տեսքը ևս ուժեղ կողմ է:

Մարզում կատարվում է ***աղբահանություն;*** Տեղադրված են աղբամաններ, սակայն խնդիրները շատ են այս բնագավառում:

Մարզը ունի օրական 24 ժամյա ***ջրամատակարարում***: Խողովակաշարի ներքին և արտաքին ցանցերը գտնվում են լավ վիճակում: Մարզպետապետարանի կողմից կատարվում են ջրագծերի նորոգման և նորացման աշխատանքներ: Մարզը ունի լուսավորության ցանց, որը կառուցված է էներգիա մատակարարող հենասյուների վրա: Անհրաժեշտություն կա հետագայում ընդլայնել լուսավորության ներքին ցանցը:

Մարզի համայնքների ճանապարհների մի մասը գտնվում են անմխիթար վիճակում: Դրանք մինչ այժմ բնակչության ու յուրաքանչյուր այցելուի համար եղել են դժվարանցանելի, պատճառել տհաճություններ և թողել վատ տպավորություն: Ճանապարհների վատթար վիճակը խոչընդոտում է նաև գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը: Նշված ճանապարհների մի մասի ասֆալտային շերտը քայքայվել է անհրաժեշ է փոսալցման իսկ որոշ մասը գրունտային են: Միայն կենտրոնական փողոցներն են ասֆալտապատված:

Մարզի բազմաբնակարան շենքերը մասամբ գտնվում են բարվոք վիճակում, անհրաժեշտություն կա որոշ շենքերի տանիքների նորոգման: Առանձնատների մի որոշ մասը կառուցվել է դեռ 50ական թվականներից և վերանորոգումների հետևանքով դարձել է բավարար բնակելի: Վերջին տարիներին բնակչության թվաքանակը ավելանում է ներքին միգրացիայի պատճառով;

Մարզի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, բնակարանային ֆոնդ և այլն) ոչ բարվոք վիճակը թույլ կողմն է:

Մարզը ***գազաֆիկացված*** է, գազաֆիկացումը շարունակվում է նոր զարգացող թաղամասներում:

Մարզի համայնքների փողոցներում կառուցված է գիշերային լուսավորության ցանց : Փողոցների երեկոյան և գիշերային ժամերին լուսավորության ցանցի առկայությունը նպաստում է բնակչության և զբոսաշրջիկների ազատ տեղաշարժին:

Մարզի հանրային շփման վայրերում և խաչմերուկներում տեղադրված են քիչ թվով **կանգառներ**, որի պատճառով կա նաև ինֆորմացիայի պակաս մարզ այցելող

զբոսաշրջիկների համար, բացի այդ խաչմերուկներում բացակայում է հետիոտնային անցումների գծանշումները:

Մարզի զբոսաշրջային կենտրոն հանդիսացող վայրերի մեծ մասում բացակայում են **հասարակական զուգարանները**

Սրանք մարզի թույլ կողմերն են:

4.Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա , սպորտ

Մարզի բոլոր բնակավարերը գործում է ապահովված են բուժհաստատություններով,որոնք հիմնականում իրականացնում են առաջին բուժօգնության ծառայություններ: Մարզի 4 քաղաքներում գործում են բազմաբնույթ ծառայություններ մատուցող հիվանդանոցներ;

Տարածաշրջանային առողջապահական կենտրոնների առկայությունը մարզի ուժեղ կողմն է:

Մարզպետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ: Մարզի բոլոր համայնքներում գործում են տարաբնույթ սպորտային խմբակներ: Սպորտը առավել զարգացնելուն նպաստում են սպորտային դպրոցները: Մարզի տարածքում սպորտդահլիճներ առկա են բոլոր դպրոցներում, սակայն գրեթե բոլոր սպորտդահլիճներում պակասում է համապատասխան գույքը: Առկա են բացօթյա խաղահրապարակներ, որտեղ տեղադրված են ֆուտբոլի, վոլեյբոլ և վասկետբոլ խաղալու համար համապատասխան սպորտային գույք:

5. Աշխատանք և սոցիալական ծառայություն.

Քանի որ մարզում կան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու խնդիրը շատ սուր չէ;Աշխատանքով ապահովվելուն նպաստում է նաեւ Երեւան քաղաքին մոտիկ գտնվելը;

Գործազրկության մակարդակը բարձր չէ;

6.Պատմամշակութային և բնական հուշարձանների առկայությունը

Խոր Վիրապ

Պատմական Արտաշատ քաղաքի բլուրներից մեկի արևելյան լանջին՝ միջնաբերդի տեղում, այժմյան Լուսառատ գյուղից հարավ-արևմուտք հառնվում է Հայոց նվիրական սրբավայրերից ՝ Խոր Վիրապի վանքը: Վանքի պատմությունը սերտորեն առնչվում է քրիստոնեության, Հայաստանի կրոնական, կրթական ու մշակութային զարգացման ողջ ընթացքի հետ: Տրդատ Գ Արշակունի թագավորը քարոզիչ Գրիգորին ենթարկել է չարչարանքների, հուսալով, որ նա կուրանա Քրիստոսին, ապա տևական տանջանքներից հետո նրան նետել են Արտաշատի արքունի բանտի մահվան դատապարտվածների գուբը, որը հայտնի էր ՝Վիրապ Արտաշատու՝ անվամբ և նա այստեղ մնացել է շուրջ 13 տարի: Աստվածային գթությամբ Գրիգորին կերակրել է մի այրի կին, որն ամեն օր գաղտնի խոր վիհի մեջ է գցել հանապազօրյա հացը: Գրիգոր Լուսավորիչը վիրապից ազատվել է Հռիփսիմյանց կույսերի նահատակումից 9 օր անց և առավելապես նրա շնորհիվ քրիստոնեությունը 301 թ.-ին պետական կրոն է հռչակվել ողջ Հայաստանում, իսկ Գրիգոր Ա Լուսավորիչը ձեռնադրվել է առաջին Հայոց կաթողիկոսը: Ամեն տարի հունիսին նշվում է Հայ առաքելական եկեղեցու նշանավոր տոներից մեկը՝ ՝Սբ Գրիգոր Լուսավորչի ելն ի վիրապեն՝: V դ. վիրապի վրա վանք է կառուցվել ու միաբանություն հաստատվել: Գրավոր աղբյուրները վկայում են, որ Խոր Վիրապում եկեղեցի է կառուցել Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը /641-661թթ/: Ցայսօր կանգուն մնացած մատուռը կառուցվել է 1661թ.: Այն

երկհարկանի է. ներքնահարկը /գուբ-զնդանը/ ունի 6,5 մ խորություն: XIIIդ-ից Խոր Վիրապի վանքը համազգային սրբավայր լինելով հանդերձ դարձել է կրթության, գիտության համահայկական հռչակավոր կենտրոն: Այստեղ գործել է առաջադիմական բարձրագույն դպրոց, մեզ են հասել տասնյակ ձեռագրեր, որոնք պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և դասվում են նրա անմահ գանձերի շարքը:

Խոսրովի արգելոց

Խոսրովի արգելոցը կազմավորվել է IV դ. Խոսրով Բ Կոտակթագավորի կողմից հիմնած անտառի տարածքում 1958թ. /տարածքը՝ 29196 հա/ Գեղամա լեռների հարավ-արևմուտքում՝ Ուրծի, Դահնակի, Երանոսի լեռնաշղթաների, Խոսրովասար լեռների լանջերին, Ազատ և Վեդի գետերի ավազաններում՝ ծ.մ. 850-2800մ բարձրություններում:

Բուսական աշխարհն ընդգրկում է բարձրակարգ բույսերի 560 ցեղի և 95 ընտանիքի շուրջ 1800 տեսակ /ՀՀ բուսական աշխարհի ավելի քան 50 %-ը/, որոնցից 146-ը գրանցված են Կարմիր գրքում:

Կենդանական աշխարհն ընդգրկում է ձկների՝ 9, երկկենցաղների՝ 4, սողունների՝ 30, թռչունների՝142, կաթնասունների՝ 50 տեսակ:

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի ավերակներ

Հնավայրն ընդգրկում է շուրջ 2 հա տարածություն: Քաղաքի բազմամյա պեղումների ընթացքում բացվել են միջնաբերդի եւ թաղամասերի՝ տարբեր դարերին պատկանող աշխարհիկ, պաշտամունքային ու արտադրական տարածքներ, որոնք իրենց հերթին թույլ են տալիս հասկանալու Դվինի գոյության ժամանակագրական պատկերը: **Ընթանում են պատմական Դվին մայրաքաղաքի հուշարձանների ամրակայման, մասնակի վերականգնման, թանգարանացման և բարեկարգման աշխատանքներ**

Դվին մայրաքաղաք-հուշարձանը շուտով կդառնա զբոսաշրջային նոր ուղղություն. Հայաստանի յոթերորդ մայրաքաղաքից մնացած կոթողներն այժմ նոր կյանք են ստանում Կառավարության և Համաշխարհային բանկի միջոցներով՝ ավելի քան 121 միլիոն դրամ: «Հայաստանի զարգացման հիմնադրամի» ֆինանսական միջոցների հաշվին «Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացման և հարակից տարածքների բարեկարգում» ծրագրի շրջանակում 2016 թ. մշակվել և ՀՀ մշակույթի նախարարության (այժմ՝ ԿԳՄՍ նախարարություն) համաձայնեցմանն են ներկայացվել Դվին մայրաքաղաքի հարավային մուտքի բարեկարգման, նոր ցանկապատի և մուտքային դարպասի նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ 2016-2017 թթ. նույն ծրագրի շրջանակում՝ նաև Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու, կաթողիկոսական առաջին և երկրորդ պալատների, միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերը, որոնք համաձայնեցվել են լիազոր մարմնի կողմից:

ՀՀ վարչապետի 2019 թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ ստեղծվել է Համաշխարհային բանկի վարկային ֆինանսավորմամբ իրականացվող տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի կառավարման կոմիտեն (նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության անդամակցությամբ), որը դրական որոշում է կայացրել նշյալ հուշարձանի ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Նշյալ աշխատանքները կատարվում են լիազոր մարմնի հսկողությամբ:

Դվինում առաջին պեղումներն իրականացրել է Ն. Մառը դեռևս 1899 թ., այնուհետև դրանք կրել են պարբերական բնույթ (1907-1908 թթ., 1936-1939 թթ., 1946-1976 թթ. , 1977-2010 թթ.): 2019 թվականից Դվին մայրաքաղաքի պեղումների արշավախումբը գլխավորում է պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Պետրոսյանը, անդամներ՝ Ն. Հակոբյան, Ֆ. Բաբայան, Ա. Ժամկոչյան, Գ. Քոչարյան, Կ. Ղաֆադարյան (ճարտարապետ), Ա. Մարտիրոսյան:

Պատմական Դվին մայրաքաղաքը (7-րդ մայրաքաղաքը) 4-րդ դ. կեսերին հիմնադրվել է հայոց արքա Խոսրով Կոտակի կողմից: Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի վարչական տարածքում՝ Երևանից 30 կմ հեռավորության վրա: Մայրաքաղաքը 13-րդ դարում վերջնականապես անկում է ապրել արաբական, ապա մոնղոլ-թաթարական արշավանքների հետևանքով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ

Հովհաննես Կարապետ վանքը հայկական միջնադարյան ճարտարապետական համալիր է ՀՀ Արարատի մարզի «Զնջոլու» /14-րդ դար/ գյուղատեղիից 1 կմ հյուսիս-արևելք: Կառուցվել է 1301 թ. Զալալ Օրբելյան իշխանի և նրա կնոջ՝ Զաքարե Իվանյանի դստեր, Գոնցայի պատվերով: Վանքի Սպիտակավոր Սբ. Աստվածածին եկեղեցին ըստ արձանագրության կառուցել է հայ ճարտարապետ Բուտը Կիրակոս և Սարգիս վարդապետների մասնակցությամբ: Այն գմբեթավր դահլիճ է՝ որմնամույթերով: Արևմտյան շքամուտքի բարավորին քանդակված է Աստվածածինը՝ մանուկ Քրիստոսը գրկին, երկու կողքին հրեշտակներ, իսկ վերևում՝ Քրիստոսը չորս ավետարանիչների խորհրդանիշներով /քանդակագործ Սարգիս վարդապետ/: Եկեղեցուց հարավ-արևմուտք Օրբելյանների ուղղանկյուն, թաղածածկ տապանատունն է /14-րդ դ./, որին արևմուտքից կից է երկհարկ, եռաստիճան եկեղեցի-դամբարանը /14-րդ դ./: Տապանատան ծածկը և եկեղեցու գմբեթ զանգակատունը ավերվել են 1679 թ. երկրաշարժից: Վանքի ուղղանկյուն պարսպին կից կառուցվել են Միաբանության շենքերը /1896թ./: Վանքի գերեզմանոցում կան հարուստ զարդաքանդակներով խաչքարեր, նաև կենցաղային պատկերներով գերեզմանաքարեր:

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր գյուղից 6 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է X-XIII դդ «Գևորգ Մարզպետունի» վանք-ամրոցի համալիրը և թաղածածկ, կիսաշրջանաձև աբսիդը, որի արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներառած է XII-XIII դդ եկեղեցու ավերակները: Վանք-ամրոցի XIII դ. եկեղեցին, թաղածածկ դահլիճ է՝ կառուցված սպիտակ ֆելզիտի մաքուր տաշած քարերից: Այն շրջապատված է ուղղանկյուն հատակագծով պարիսպներով, որոնց չորս անկյունները ուժեղացված են շրջանաձև աշտարակներով: Համալիրի բնակելի և տնտեսական թաղածածկ սենյակները կից են հարավային և արևելյան պարիսպներին:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Սբ. Ստեփանոս եկեղեցին Աղջոց վանական հուշարձանախմբի գլխավոր եկեղեցին է: Գտնվում է ՀՀ Արարատի մարզում՝ Խոսրովի պետական արգելոցի տարածքում /Գեղարդից 7 կմ հարավ, Գառնիից 5-6 կմ հարավ-արևելք/: Կառուցվել է 13-րդ դարի

սկզբին՝ Զազա իշխանուհու պատվերով: Եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ, չորս ավանդատուն: Գավիթը /13-րդ դ. երկրորդ կես/ գտնվում է գլխավոր եկեղեցուց արևմուտք, պահպանվել է պատերի մի մասը: Սբ. Ստեփանոսի հյուսիսային պատին կից կառուցվել է Պողոս-Պետրոս թաղածածկ եկեղեցին: Ուշագրավ են եկեղեցու մուտքի երկու կողմերում Պողոս և Պետրոս առաքյալների բարձրաքանդակները: Սբ. Ստեփանոս եկեղեցին ավերվել է 1679 թ. երկրաշարժից:

Սուրբ Գևորգ եկեղեցի

Հայ Առաքելական եկեղեցի Արարատի մարզի Կանաչուտ գյուղում: Ընդգրկված է Կանաչուտի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Գտնվում է Կանաչուտ գյուղի մեջ: Կառուցվել է 1908 թվականին: Ուղղանկյուն հատակագծով, արևելքից արևմուտք ձգված, երկթեք տանիքով կառույց է: Արևելյան կողմում ավագ խորանն է՝ կից ավանդատներով: Ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Կառույցի անկյունները հարդարված են կիսասյուներով: Եկեղեցու հարավային պատին ագուցված է 12-13-րդ դարերի խաչքար: Կառուցված է տեղական գորշ տուֆով: Եկեղեցին չի գործել 1937 թվականից:

Հիմնովին վերակառուցվել է 2007 թվականին, տեղաբնակ ՀՀ ոստիկանության պետ (2008-2011 թթ.) Ալիկ Սարգսյանի հովանավորությամբ: 2007 թվականի ապրիլի 14-ին Նավասարդ սրբազանը վերաօծել է Կանաչուտ գյուղի վերակառուցված Սուրբ Գևորգ եկեղեցին: Վերակառուցման հեղինակը ճարտարապետ Հակոբ Բաբախանյանն է: Եկեղեցու արևմտյան պատին զետեղված է արձանագրություն եկեղեցու վերակառուցման մաս:

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մարզի Արարատ գյուղում է գտնվում Սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանը:

Մարզի Զանգակատուն (Սովետաշեն) գյուղում է ծնվել ականավորբանաստեղծՊարույրՍևակը, որտեղ էլ գտնվում է նրա տուն-թանգարանը:

7.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում , մասնավորապես Արարատի մարզում, զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով երկրի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված.

1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,

2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,

3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Այսպիսով վերլուծելով ՀՀ Արարատի մարզի ուժեղ և թույլ կողմերը՝ զբոսաշրջության զարգացման տեսանկյունից, եկել ենք հետևյալ եզրակացությանը, Որ.

Մարզի աշխարհագրական դիրքը՝ Երևանից ոչ մեծ հեռավորության վրա , նոր հիմնովին վերանորոգված ճանապարհները, Արարատի բնակլիմայական պայմանները, պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները, հնագույն եկեղեցական համալիրները, հին բնակավայրերիի գրավիչ ճարտարապետական տեսքը, ինչու չէ , Խոսրովի արգելոցը ,կարեղ են մարզը դարձնել զբոսաշրջիկների համար գրավիչ վայր:

Սակայն.

Կոյուղու բացակայությունը, ոռոգման համակարգի անբավարար վիճակը, Ոռոգման ջրի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտությունը, խմելու ջրի համայնքային ցանցի հիմնանորոգման անհրաժեշտությունը, աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակը, կանգառների սպասասրահների բացակայություն, առողջական կենտրոնի գույքային անբավարար պայմանները, համայնքային ճանապարհների և

փողոցների անբարեկարգ վիճակը, համայնքային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն , համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտությունը, բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը, թերի իրազեկվածությունը տարածաշրջանում եղած պատմամշակութային վայրերի, ինչպես նաև համայնքում գործող զբոսաշրջային և հասարակական կառույցների վերաբերյալ, հյուրանոցների բացակայությունը, սպասարկման որակի ոչ բարձր մակարդակը, խոչընդոտ են հանդիսանում համայնքում զբոսաշրջության զարգացման բարձր մակարդակին հասնելու համար:

Ուստի մարզը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար, պետք է վերոնշյալ խնդիրներին լուծում տալ, կառուցել միջին և բարձրակարգ հյուրանոցներ, ավելացնել հյուրատների քանակը, քանի որ հատկապես ամառային ամիսներին ներքին զբոսաշրջության զարգացման համար դրանք անհրաժեշտ են: Լուծել որակյալ խմելու ջրի հարցը, ծառայությունների ոլորտը զարգացնել , իրականացնել կանգառների կառուցման աշխատանքները , կազմակերպել քաղաքացիների ճանապարհի անցման բավարար պայմաններ.
Որպեսզի մարզը համարվի զբոսաշրջային կենտրոն, կանգառների առկայությունը պետք է հնարավորություն տա տարածաշրջան այցելող հյուրերին կանգառներում տեղադրված ինֆորմացիոն շիթերի, քարտեզների և այլնի միջոցով ուղղորդել տեսարժան վայրեր ու հանրային ծառայություններ մատուցող օբյեկտներ: Կանգառների առկայությունը հնարավոր կդարձնի բնակիչ-զբոսաշրջիկ շփումը, որն էլ հետագայում կունենա իր դրական արդյունքները՝ լեզվի իմացության փոխանակում, նոր ծրագրերի ու ներդրումների հնարավորություններ, համատեղ նախաձեռնությունների պլանավորում և իրագործում: Հետագայում միջհամայնքային տրանսպորտ ունենալու դեպքում կունանեանք պատրաստի ենթակառուցվածք:
Արարատի մարզը պետք է դարձնել ավելի բարեկարգ և հրապուրիչ համանքի բնակիչների և զբոսաշրջիկների համար՝ ապահովելով նրանց սանիտարահիգենիկ պայմաններով ;

Ներկայումս մարզի հավաքված կենցաղային աղբը տեղակայվում է բնակավայրերին հարակից տարածքներում, որն էլ պատճառում է բազմաթիվ տհաճություններ: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի մինչայժմ նշված վայրերում տեղակայված աղբը ծածկվի բուսական հողով, որն էլ հետագայում կվերածվի կանաչապատ տարածքի:

Պահպանել Արարատի մարզի բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից, ունենալով մաքուր շրջակա միջավայր՝ տարածաշրջանը դարձնել առավել հետաքրքիր զբոսաշրջիկների համար:

Այս ամենի իրականացման արդյունքում կունենանք մաքուր և բարեկեցիկ շրջակա միջավայր, հնարավորություն կստեղծվի խուսափել հիվանդություններից և համաճարակներից: Մաքուր շրջակա միջավայր ունենալով տարածաշրջանը կդառնա առավել հետաքրքիր զբոսաշրջիկների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչական կենտրոնը, «Էջմիածին», 1997,

2.Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002։

3.«Դպրոցական մեծ հանրագիտարան»

4. .Հակոբյան Ս., Արարատի մարզ, Երևան, 2010։

5.«Հայաստանի զբոսաշրջության զարգացման 2020-2030 թվականների ռազմավարության նախագիծ»

6.«Արարատի մարզի զարգացման ծրագիր»